

ԿԱՆՏԻ ԻՄԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

գ. Էմպիրիզմի եւ ուացիօնալիզմի ընդհանուր սխալները.

Սակայն կարեւորը այն սխալն է, որի մէջ հաւասարապէս մեղադրելի են էմպիրիզմն ու ուացիօնալիզմը, որ նոքա իմացութեան հարցերը քննելիս իմացաբանական հոգի վրայ չեն կանգնած: Նոքա նախ իմացաբանական սկզբունքները գործադրում են կամ մետաֆիզիքական ուղղութեամբ, ինչպէս անում է ուացիօնալիզմը (նախասահման հարմանիան, որ, պատճառական սկզբունքի մետաֆիզիքական գործադրութիւնն է), կամ հոգեբանական ուղղութեամբ, ինչպէս ասում է էմպիրիզմը (առօրեական պատճառականութիւնը բացատրելը պատճառականութեան հոգեբանական գործադրութիւնն է), ապա այնուհետեւ այդ սկզբունքների գործադրութեամբ բացատրում են նոյն այդ սկզբունքները, առանց գիտակցելու, որ նրանք արդէն կանխաւ տրամաբանական անհրաժեշտութեամբ կամայ-ակամայ նախադրում են նրանց անգիտակցաբար, որ նրանք կազմում են իմացութեան ամենասկզբնական (այլիս իրենցից առաջ նախադրեալ չունեցող) նախադրեալներն ու պատուանդանը, որի շնորհիւ միայն հնարաւոր է իմացութիւնը, գիտութիւնը և ոչ ընդհակառակն: Ուրեմն չպէտք է վերցնել մի հոգեբանական կամ մետաֆիզիքական սկզբունք և ծառայեցնել այն իբրեւ մի իմացաբանական մատերիա կամ քնաբեր դեղ (Մոլիեռի), ինչպէս սրամտութեամբ նկատում է Կունօֆիշերը, բացատրելու իմացութեան սկզբունքները, իմացաբանութիւնը բոլորովին անկախ է հոգեբանութիւնից և մետաֆիզիկայից, նրա առարկան է գիտութիւնն ընդհանրապէս, հոգեբանութիւնն ու մետաֆիզիկան իբրեւ գիտութիւններ, միւս գիտութիւնների նման, կարող են իմացաբանական քննական ուսումնասիրութեան նիւթ լինել, և ոչ երբէք հիմք: Այս կողմից

նա նման է տրամաբանութեանը: Էմպիրիզմն ու ռացիօնալիզմն անկարող են իրենց բռնած ուղղութեամբ որսալ բուն իմացաբանական հայեցակէտը. նորա յաճախ ճիշտ են դնում հարցերը, բայց լուծելիս առանց նկատելու սահման է իմացաբանական հողը նրանց ոտքի տակից և նրանք կանգնած են մնում հսգերանութեան կամ մետաֆիզիկայի առպարէզում: Իմացաբանութիւնը կանտն ստեղծեց և եղաւ նրա համար այն, ինչ Արիստոտէլը տրամաբանութեան համար: Կանտն ինքն էլ գիտակցում է այդ, երբ ասում է, թէ իրանից առաջ չի եղել տրանսցենդենտալ փիլիսոփայութիւն:

Նախ-Կանտեան փիլիսոփայութիւնը գործադրում և օգտուում է մեր ամբողջ իմացութեան հիմքը կազմող սկզբունքներից, առանց իրեն հաշիւ տալու, թէ սրտեղից են դրանք և ինչի վրայ է հիմնւում դրանց գոյութիւնն ու իրաւացիութիւնը, մինչև ուր է տարածւում դրանց գործադրութեան սահմանը և ինչպիսի բնոյթ ունին դրանք: Նախ-Կանտեան փիլիսոփայի իւր իմացական քայլերը չի հիմնաւորում և արդարացնում, նա չի էլ գիտակցում այդ քայլի բոլոր մոմենտները, իսկ չգիտակցուած և չպատճառաբանուած քայլը խորապէս դոգմատիկ է: Ահա թէ որտեղ է Նախ-Կանտեան փիլիսոփայութեան դոգմատիզմը, որի մէջ հաւատարապէս մեղադրում են ռացիօնալիզմն ու էմպիրիզմը: Դոգմատիզմ՝ այն իմաստով, թէ հնարաւոր է ինքնին իրերի իմացութիւնը, վերաբերում է գլխաւորապէս Նախ-Կանտեան ռացիօնալիզմին, թէև նա սկզբից և եթ յանձին Դեկարտի կասկածով է սկսում իւր խորհրդածութիւնները, իսկ յանձին Լայբնիցի խոստովանում է, թէ չի կարելի ապացուցել խիստ ճշգրտիւ արտաքին աշխարհի գոյութիւնը: Եթէ վերցնենք ռացիօնալիզմն ու էմպիրիզմը ոչ որպէս պատմական որոշ ուղղութիւն, այլ որպէս իմացաբանական ուղղութիւններ ընդհանրապէս, նոցա գաղափարից երբէք անհրաժեշտ չէ, որ նոքա ընդունին ինքնին աշխարհի ճանաչելիութիւնը կամ նոյն իսկ գոյութիւնը: Այնպէս որ դոգմատիզմի մէջ

երրորդ իմաստով (ռէալիստ) երբէք չի կարելի մեղադրել ռացիօնալիզմն ու էմպիրիզմն ընդհանրապէս, այլ միմիայն նախ-Կանտեան պատմական էմպիրիզմն ու ռացիօնալիզմը: Մեղադրելով, սակայն, նախ-Կանտեան փիլիսոփայութիւնը մի պատահական և նրա ոգուց չբլխող խնդրում, մեղադրած չենք լինի դրանում՝ ռացիօնալիզմն ու էմպիրիզմն ընդհանրապէս: Լայքնեցը կարող էր չընդունել միւս մօնադաների գոյութիւնը, այլ մի սոսկ մօնադայի և նրա ստեղծած պատկերացումների աշխարհի—երևոյթների. բայց եթէ նա տոյնումենայնիւ գործադրէր իմացական ապրիորի սկզբունքներ առանց «գեգուկցիայի», առանց հիմնաւորման և իրաւունակութեան հաստատման, եթէ նա իմացութեամբ իմացութիւնը բացատրէր—Ա-ով Ա-ն ապացուցէր, նա կմնար խորապէս դողմատիկ: Նոյնն էլ վերաբերում է, ինչպէս տեսանք, էմպիրիզմին:

Բացի այս բուն գնոսէօրդիական դողմատիզմից նախ-Կանտեան փիլիսոփայութիւնը մեղադրելի է նախ ռէալիստական դողմատիզմի մէջ: Ճիշտ է, նախնական նախ ռէալիզմը չկար այլևս. նա վերացուեց հէնց այն օրից, երբ միտքն սկսեց բարձրանալ մասնակի դէպքերից և ընդհանրացումներ անել, որի ժամանակ նա պէտք է զատէր կարևորն ու անկարևորը, հիմնականն ու պատահականը, օրեկտիւն ու սուբեկտիւը. այսինքն այն օրից, երբ սկսուեց ծագել փիլիսոփայութիւնը: Սակայն նախութիւնը կապուած է ռէալիզմի հետ.—մի աշխարհայեացքի մէջ նոյնչափ նախութիւն կայ, որքան և ռէալիզմ. կրիտիցիզմը երբէք չի կարող ռէալիզմի հետ կապուել. նորերս գտնուած «կրիտիկական ռէալիզմը» տրամաբանօրէն անդուգորդելի տերմինը հաւասար է «երկաթէ փայտին»: Ռէալիստը նախ և առաջ հակադրում է իմանալիքն ու իմացողը, օրեկտն ու սուբեկտը, իբրև իրարից անկախ բաներ, ապա այնուհետև դրանց միջև եղած փոխազդեցութեամբ կամ նախասահման ներդաշնակութեամբ բացատրում է իմացութիւնը: Մինչդեռ իմացաբանական խորհրդածութեամբ դեռ նախ պիտի որոշուի, թէ որքան արժէք ունի այդ

Հակադրութիւնը: Ըստ ռէալիզմի մեր պատկերացումներն են յարմարում (նախասահման ներդաշնակութեան, թէ անմիջական ազդեցութեան շնորհիւ, այդ միւսնոյնն է) իրերին, մինչդեռ ընդհակառակն, ինչպէս յետագայում կտեսնենք, թէ ինչպէս Կանտը իմացաբանական խորհրդածութիւնից եկաւ այդ եզրակացութեան, իրերն են յարմարում մեր մտածութեան օրէնքներին: Կանտը իւր փիլիսոփայական այդ յեղաշրջումը շատ յաջող կերպով համեմատում է Կոպերնիկոսի յեղափոխութեանը տիեզերաբանութեան շրջանում: Մինչև Կոպերնիկոսը կարծում էին, թէ արեւն է պտոյտ դալիս ամբողջ երկնակամարով հանդերձ երկրի շուրջը, մինչդեռ բոլորովին հակառակն է:

2. Անցումն դէպի Կանտ.

Նախ-Կանտեան փիլիսոփայութեան այս ընդհանուր ուրուագծից և քննադատութիւնից յետոյ հեշտ է կանխանշմարել, թէ փիլիսոփայութիւնը ինչ ուղիով պիտի գնար, որ ազատուելով միակողմանիութիւնից և դոգմատիզմից և բարձրանալով նրա վրայ (նախ-Կանտեան փիլիսոփայութեան)՝ մի նոր տեսակէտից ձուլէր նրա ճշմարիտ կողմերը: Նախ քան ձեռնարկելը աշխարհի իմացութեանը հարկաւոր է տեսնել, հնարաւոր է այն և ինչպէս, իսկ այդ իմանալու համար հարկաւոր է քննել նախ մեզ ամենից մօտ մեր իմացութեան օրգանը՝ բանականութիւնը, տեսնելու համար թէ նրա կազմութեան շնորհիւ ինչն է մեզ մատչելի և ինչպէս և ինչը ոչ և ինչո՞ւ — Նախ-Կանտեան փիլիսոփայութիւնը այդ հարցերը չէր դնում բուն իմացաբանական աննախադրեալ հողի վրայ. նա նախ քան այդ հարցերը իմացաբանօրէն լուծելը արդէն ունեցած էր լինում՝ որ և է դոգմատիկական նախադրեալ, որը վերջ ի վերջոյ նրա աշխատանքն իզուր էր դարձնում, որովհետեւ այդ նախադրեալը քննական խորհրդածութեամբ չէր վաւերացւած, չնայած նա ամբողջ փիլիսոփայական սխտեմի հիմքն էր կազմում: Հարկաւոր էր, որ մարդկային իմացու-

թիւնն ունենար մի ամուր պատուանդան, ուր նա չեն-
 թարկուէր պատմական պատահարների ու փորձանքների,
 ուր նրան ոչ սկեպտիկի նետը գիպչէր, ոչ էլ դոգմատիկի
 կոյր անգիտակից պնդումներից վտանգուէր. մի գեր-պատ-
 մական, գեր-ժամանակական հիմք, տրամաբանական ճշ-
 մարտութեամբ անհրաժեշտութեամբ և համարժեքութեամբ
 օժտուած: Լքման մարդկային միտքը հրաժարուում էր
 փիլիսոփայութիւնից, ուրեմն և մտածելուց և գործելուց.
 և դիմում էր դէպի մահ: Բայց միտքը միթէ կարող է
 մեռնել. նա կարող է սխալուել, թիւրիմացութեան մէջ
 ընկնել, զանազան բաներ չնկատել, բայց ոչ երբեք դա-
 դարել գործելուց, մեռնել: Մարդկային միտքը նախ-կան-
 տեան փիլիսոփայութեան շրջանում միայն միակողմանիու-
 թեան և սխալանքի մէջ էր ընկել, բայց նա սթափուեց և
 ինքնագիտակցութեան և ինքնաքննութեան դիմեց յան-
 ձին Կանտի այս անգամ արդէն նոր և հաստատուն
 հիմքերի վրայ: Այդ հիմքը գնօսէօլօգիական հիմքն է:
 Գնօսէօլօգիական հայեցակէտը մէկ պէտք է լինի, ինչպէս
 մէկ է տրամաբանութեան հայեցակէտը, որովհետեւ մէկ է
 մարդկային միտքը, և չպիտի լինի մետաֆիզիքական հի-
 պոտիկ գիտութիւն, այլ մատեմատիկայի և տրամաբանու-
 թեան նման ապատիկտ ճշմարտութեամբ պիտի օժտուած
 լինի: Այս տեսակէտից իմացաբանական ներկայ երկու
 գլխաւոր ուղղութիւններից, որոնցից մէկը խմբւում է
 հիւմի շուրջը, միւսը Կանտի, վերջինս է ճիշտը, որովհետեւ
 նա կանգնած է իմացաբանական հողի վրայ. իսկ նոր էմ-
 պիրիզմը առաջադրելով «մտային էկոնոմիզմի» թեզիսը,
 դառնում է մի բիոլոգիական—հոգեբանական գուցէ և
 բաւական տաղանդաւոր հեպոթեզ: Ալօիզ Ռիլը սրամտու-
 թեամբ նկատում է, որ «մտային էկոնոմիզմն» ինքը, որպէս
 մի գիտական հիպոթեզ, կարող է իմացաբանական հետա-
 ղօտութեան սուբստրատ լինել և ոչ երբեք հիմք: «Մտային
 էկոնոմիզմի» հիպոթետիկ օրէնքը, եթէ խորը քննենք,
 կտեսնենք, որ պատճառական սկզբունքի փաստական գոր-
 ծադրութիւնն է. այլապէս՝ կտեսնենք, որ բուն իմացաբա-

նուկան հարցը կրկին խուսափել է էմպիրիստների ձեռքից և նրանք էլի իմացութեամբ իմացութիւնն են բացատրում, այսինքն ոչինչ չեն բացատրում: Այսպիսով Կանտի կարևոր գործերից մէկն այն է, որ նա իմացաբանութիւնը դրաւ զուտ իմացաբանական աննախադրեալ հոգի վրայ, ազատելով այն դոգմատիզմի վերջին մնացորդներից և զտելով հոգեբանութիւնից և մետաֆիզիկայից:

Սակայն ըստ ոմանց Կանտն ևս ազատ չէ դոգմատիզմից, երբ ընդունում է, թէ հնարաւոր է ինքնաբնական դատող և ինքիմաց «ես», Կանտը այդ կեդրոնական կէտում, իբր թէ, մնում է դոգմատիկ, որովհետեւ այդ հաւատը հիմնուած է, իբր թէ, լոկ հաւատի վրայ, իսկ ոմանք էլ այդ «դոգմատիզմը» լաւ պատասպարելու համար (օր. Վենդելբանդտը) արմատաւորում են նրան բարոյական համոզման աշխարհում: Կանտին դոգմատիզմի մէջ մեղադրելը, ինչ չափով որ նա վերաբերում է յատկապէս այս արմատական կէտին, հիմնուած է կրիտիցիզմի բուն բնաւորութիւնը և նրա՝ սկեպտիցիզմից և դոգմատիզմից բարձր լինելն ու նրանց հետ սենեցած առնչութիւնը լաւ չհասկանալու վրայ: Սկեպտիցիզմը, ինչպէս տեսանք, որ սնդում է իմացութեան անհնարինութիւնը, իբրև դրական աշխարհայեացք անհնար է և ինքնասպան: Կրիտիցիզմն ուրեմն չպիտի հարց դնէ, թէ հնարաւոր է իմացութիւնը, իմացութեան (իսկ ինքնիմացութիւնը իմացութեան ամենաճշմարիտն է, ինչպէս արդէն Դեկարտն է ապացուցել) հնարաւորութիւնը չընդունել՝ նշանակում է ինքնահակառակութեան մէջ ընկնել, այլ սկզբից և եթ պէտք է ընդունել այն, սկեպտիցիզմի մէջ թաղնուած գռեհիկ դոգմատիզմից հէնց խոյս տալու համար և, որը կարևորն է, տրամաբանական անհրաժեշտութիւնից ստիպուած: Մենք բանականութեան թէ դոգմատիկական և թէ սկեպտիկական գործառութեան ժամանակ կանխած ենք ունենում տրամաբանական անհրաժեշտութեամբ որոշ սկզբունքներ, որոնք մեր իմացութեան հիմքն ու հնարաւորութեան պայմանն են, պէտք է գիտակցել, զատել ամէն իմացութեան

կանխող այդ ձևերը, որոշագրել, հիմնարանել և ցոյց տալ թէ ինչպէս նրանք կարող են իմացութեան հիմք լինել. ուրեմն հարցը պէտք է դնել այսպէս — Ինչպէս է հնարաւոր իմացութիւնը և ինչ տարրերից է նա կազմուած: Այդ հիմքերը մենք կարող ենք դիտակցել, որովհետեւ նոքա մեր բանականութիւնիցն են բղխում, մեր գիտակցութեան ձևերն են, իսկ ինքնագիտակցութիւնը անմիջականօրէն տրուած ճշմարիտ փաստ է: Սկսած ցոյցիցմն էլ դոգմատիզմն էլ իմացութիւն են: Այդ բոլորից, երբ մենք սկսում ենք մտածել, կասկածել, մենք իմացութիւն ենք կատարում. հարց դնել, թէ որտեղից են մեր իմացութեան ձևերը, պայմանները, նոյն ինքն իմացութիւնը, դրան չի կարելի պատասխանել առանց դիմելու այդ իսկ ձևերին ու պայմաններին. իմացութիւնն սկսւում է այն կէտից, որտեղից և ինքնագիտակցութիւնը և մտածութիւնն ընդհանրապէս: Վերացնել տրամաբանական այն անհրաժեշտ նախադրեալը, թէ հնարաւոր է իմացութիւնը (ուրեմն և յատկապէս ինքնիմացութիւնը, ինքնաքննադատութիւնը) նշանակում է իմացութիւնը կանխեցնել իմացութեանը, այսինքն իրենից փախչել, կարծելով կարելի է զատուել իրենից: Եթէ կրիտիցիստը չի ուզում այդպիսի զաւեշտական դրութեան մէջ ընկնել, դրանով նա դոգմատիկ չի դառնում, ընդհակառակն հէնց դրանով նա բարձրանում է դոգմատիզմից և կանգնում միակ վստահելի և անխախտ հողի վրայ*):

Խնդիրը իմացաբանական հողի վրայ դնելու և այդ նոր տեսակէտից խորհրդածելով այնուհետեւ այդ աշխատանքին իբրեւ տրամաբանական հետեանք շուռ է տրւում նաև իմացողութեան հասկացողութիւնը: Որ իմացութիւնը

*) Մինչև անգամ կարելի է մի քայլ հեռանալ Կանտից և ասել, որ «իմացութիւնը հնարաւոր է» թեզիսը կանխում է ոչ թէ իմացաբանութեանը, այլ ամէն գիտութեան. նա մարդկային մտածողութեան հիմնական նախադրեալն է. մինչև իսկ նրա սկեպտիկ խորհրդածութեանց ժամանակ այդ պատճառով այդքեզն եւս apriori սինթետիկ նախապայման է, նախադրեալ իմացութեան:

երևոյթներին է վերաբերում և ոչ թէ ըստ ինքեան աշխարհին և որ երևոյթները իբրև մեր պատկերացումներ պիտի համակերպուեն մեր ապրիորի սկզբունքներին, այդ հետևում է այն բանից, որ մենք ունինք *apriori* ձևեր, որով մեր բաւականութիւնը փորձել, ուրեմն և բոլոր փորձերի գումար (ներկայ և հնարաւոր) աշխարհը ձևակերպում է. այդ սկզբունքների ապրիորիութիւնն այն ժամանակ միայն հասկանալի կըլինի և կբացատրուի, երբ նոքա միմիայն երևոյթներին վերաբերուէին:

Հարցը իմացաբանական հոգի վրայ դնելուց յետոյ երկրորդ կարևոր վաստակն այն է, որ Կանտը փիլիսոփայութեան մէջ է մտցրել մի գերարժէք սկզբունք՝ ֆորմալ մոնիդմ: Նախ միտքը միանգուսպ պահանջ է զգում գտնել որոշ թանձրացեալ տարր և այդ մի հատիկ տարրի թանձրացումով ու նոսրացումով բացատրել ամէն փոփոխութիւն, որի ժամանակ նա միշտ անփոփոխ է մնում և նոյնական: Գոյաբանութեան մէջ այդ նախ մատերիալ-մոնիդմին պատկանում են սպիրիտուալիզմ ու մատերիալիզմը, իսկ իմացաբանութեան մէջ ռացիոնալիզմն ու էմպերիզմը: Ռացիոնալիզմն աշխատում էր մտածութեան իբրև նիւթ ծառայեցնելով նրա պղտորութեամբ ստանալ զգայութիւնը, իսկ էմպիրիզմը՝ զգայութեան վճիտութեամբ և նրբացմամբ ստանալ միտքը, այն ինչ նրանք տարբեր կարողութիւններ են: Սակայն նախ-Կանտեան փիլիսոփայութեան այս մատերիալ-մոնիդմը միայն իմացաբանական չէր, այլ ընդհանուր փիլիսոփայական: Բարոյականութիւնը ստորադասում էր իմացութեանը, բարի գործել, նշանակում էր ճիշտ, այսինքն պարզ գիտակցութեամբ գործել, իսկ էմպիրիզմը բարոյականութիւնը արտածում էր եսական բնազդներից: Բարու, գեղեցկի և ճշմարտի աշխարհները գեռ լաւ չէին զատուած իրարից և իւրաքանչիւրին իւր յատուկ տեղը չէր մատնանշուած. նրանք բոլորը նոյն մակերևոյթի վրայ էին դասւում և նոյն նիւթից արտածւում, ուստի նոքա կամ կորցնում էին իրենց ինքնուրոյնութիւնը՝ ստորադասուելով մէկը միւսին, կամ անտա-

գոնիղմի մէջ ընկնում: Կանտը իմացաբանութեան մէջ բարձրացաւ նախ մոնիղմից նրանով, որ սկսեց զգայութեան և մտածութեան դուալիզմից.— Դեկարտի տարածականութեան և մտածողութեան գոյաբանական դուալիզմը շուտ տուեց իմացաբանական դուալիզմին: Իսկ ընդհանուր փիլիսոփայութեան մէջ նա բարձրացաւ մատերիալ-մոնիղմից նրանով, որ խստիւ զատեց և հիմնական գծերով նկարակերտեց բարու, գեղեցկի և ճշմարտի աշխարհները*):

(Շարունակելի)

3. 3.

ԱՆԴՐԿՈՎԱԾՈՒ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

II.

Վրաստանի հողային պայմանները.

Անդրկովկասում պատմական անցեալով և կուլտուրայով աչքի են ընկնում և վրացիք: Վրացիք Սեմիտական—յաբեթական ծագում ունեն¹⁾ և Անդրկովկասի ամենահին բնակիչներից են: Վրաստանը իր պատմական անցեալով բաւական նման է Հայաստանին, և հէնց ուղղի շրջանում այդ երկու երկրները սօցիալական բանական նման կարգեր են ունեցել:

Վրաստանի հին անցեալի մասին պատմական տեղեկութիւններ հաղորդում են Քսենոֆոնտ և Ստրաբոն: Վրաստանում, շնորհիւ երկրի դիրքի, շատ զարգացած էր ցեղային ուրոյն կեանքը. երկիրը բաժանուած էր բազմաթիւ մանրիկ տոհմերի, իշխանութիւնների մէջ: Տոհմի գլխաւորը կոչւում էր մամասախլիս, որ նշանակում է տան հայր կամ տոհմապետ: Մամասախլիսներ բաւական կային, բայց ժամանակի ընթացքում նրանցից Մցխէթի մամասախլիսը աւելի է աչքի ընկնում և միւսների վերաբերմամբ առաւելութիւններ ձեռք բերում: Թէև նա դարձեալ մամասախլիս էր կոչւում, բայց իւր իրաւունքներով նման-

*) Դեռ մինչև այժմ էլ չի ազատուել մտածողութիւնը մատերիալ-մոնիղմից. բաւական է յիշել վոլոնտարիզմը, ինտելեկտուալիզմը հոգեբանութեան մէջ, անտեսագիտական մատերիալիզմը պատմափիլիսոփայութեան մէջ և այլն...

1) Проф. Н. Марр. История Грузии 1906. եր. 17.